

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Ի Ր Ա Վ Ա Բ Ա Ն Ն Ե Ր Ի Մ Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (63)
2014 թ.

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո թ ր հ ու ռ ղ

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47
Էլ. կայք՝ www.orenq.am

Սամվել Դիլբանդյան -

ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

ի.գ.թ., պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.թ.

Վիգեն Քոչարյան - ի.գ.թ.

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:

e-mail: ysu@ysu.am

Դասիչ՝ 77771

Տպագրական 7 մանուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

18.04.2014

Հանձնված է տպագրության

13.05.2014

СОЮЗ ЮРИСТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (63)
2014 г.

Главный редактор:
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Давид Мелконян -

к.ю.н., ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Гагик Амбарцумян

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - к.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1, юридический
факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: www.orenq.am

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 18.04.2014
Подписано к печати 13.05.2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐԸ 5

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ռաֆայել Եղյան

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԱԴՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ6

Սայադ Բադալյան

ՕՐԵՆՍԱԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ16

Մերի Սարգսյան

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՀԱՄԱՐ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ23

Արև Ղազարյան

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՔՎՈՏԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ34

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գոհար Գևորգյան, Տարոն Սիմոնյան

ՂԱՏԱՐԱՆՈՒՄ ԵՐԵՄԱՅԻ ԼՍՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕՐԵՆՍԱԴՐԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ44

Լևոն Շախպարյան

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ53

Լիլիթ Ղազանջյան

ԱՆՁԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱՍԱԿԱՐԳԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ63

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Елена Антонян

ПРИВЛЕЧЕНИЕ ОСУЖДЕННЫХ К ТРУДУ И ЕГО ЭФФЕКТИВНОСТЬ72

Արմինե Մելիքսեթյան

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ 235 ՀՈԴԿԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՐԱԽՈՒՄԱԿԱՆ
ՆՈՐՄԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ80

Տիգրան Մուկոյան_Toc387931029

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՑԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ
ՁԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ88

Գուրգեն Քոթանջյան

ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 98

Արմեն Գրիգորյան

ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ ԽԱՔԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ
ԿՆՔՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔԻՑ 106

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**Վահագն Դալլաքյան**

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԱՐԳԵԼԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ
..... 114

Արսեն Թավադյան

ՀԱԿԱՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՄ
ԵՎ ԱՄՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ԶԵՎԱՎՈՐՎԱԾ ՈՐՈՇ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ 124

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**Քնարիկ Վարդանյան**

ՓԱԽՏԱԿԱՆԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 133

Միեր Մկրտչյան

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ 146

ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Քննարկի Վարդանյան

ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ, դասախոս

Փախստականի հասկացության ձևավորման պատմությունն սկսվում է Ռուսական և Օսմանյան կայսրությունների փլուզումից, երբ անհրաժեշտություն առաջացավ կարգավորել բռնագաղթյալների պաշտպանության հետ կապված հիմնահարցերը¹: Ամենավաղ ձևավորված փաստաթղթերը կարգավորում էին փախստականների առանձին խմբերին՝ ռուսներին², հայերին³, ինչպես նաև Գերմանիայից, Ավստրիայից և հրեական ծագում ունեցող բռնագաղթյալներին⁴ վերաբերող խնդիրները: 1930-ականներին Եվրոպայում առկա պատերազմական իրավիճակը ստիպեց փախստականների իրավունքների պաշտպանությանն ուղղված նոր միջազգային իրավական փաստաթղթեր մշակելու փորձեր կատարել, չնայած որ յուրաքանչյուր նոր ստեղծված փաստաթուղթ խիստ դժվարությամբ էր վավերացվում պետությունների կողմից: Արդյունքում արդեն իսկ Երկրորդ Համաշխարհային պատերազմի նախօրեին բոլոր ջանքերը՝ ստեղծել փախստականների իրավունքների պաշտպանությանն ուղղված համընդհանուր միջազգային-իրավական փաստաթուղթ, ձախողվեցին: Որպես հետևանք՝ պատերազմի ավարտից հետո միջազգային հանրությունն ի վիճակի չէր լիարժեք և արդյունավետ լուծում տալու պատերազմի հետևանքով փախստական դարձածների խնդիրներին⁵:

Միավորված ազգերի կազմակերպությունը 1951թ. հուլիսի 28-ին ժնևում հրավիրեց պետությունների լիազոր ներկայացուցիչների խորհրդաժողով՝ փախստականների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային-իրավական փաստաթուղթ մշակելու նպատակով: Արդյունքում ընդունվեց «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիան, որն այսօր վավերացրել է 145 պետություն⁶: Այն առաջին միջազգային համաձայնագիրն է, որը տվեց փախստականի համընդհանուր սահմանումը: Սա չէր սահմանափակվում որևէ կոնկրետ քաղաքացիության պատկանելության կամ էթնիկ ծագում ունեցող խմբով: Սույն կոնվենցիան ամրագրեց փախստականների իրավական պաշտպանության և այլ աջակցության ձևերը, այն սոցիալական իրավունքները, որոնք պետք է տրամադրվեին նրանց կոնվենցիայի անդամ պետությունների կողմից⁷:

¹ Տե՛ս Иранпур З.Ф., Проблема защиты прав беженцев: исторические истоки и современность. <http://justicemaker.ru/view-article.php?id=11&art=2187> (դիտվել է 24 հունվարի 2014թ.):

² Տե՛ս Hathaway J.C., The Rights of Refugees under International Law, CAMBRIDGE University Press, New York, 2005, էջեր 83-86:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Փախստականների միջազգային կազմակերպության Սահմանադրություն (15 դեկտեմբերի 1946թ.), Հավելված 1-ի մաս 1, կետ 3:

⁵ Տե՛ս Robinson N., Convention Relating to the Status of Refugees: Its History, Contents and Interpretation. New York, Institute of Jewish Affairs, World Jewish Congress 1953, էջեր 2-3:

⁶ Կոնվենցիային ամենաուշը միացել է Մոնտենեգրոն, 2006թ. հոկտեմբերի 10-ին:

⁷ Տե՛ս Robinson N., նշված աշխատությունը, էջեր 3-5:

«Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ փախստական համարվում է այն անձը, ով.

1. դիտվել է որպես փախստական 1926 թվականի մայիսի 12-ի և 1928 թվականի հունիսի 30-ի համաձայնագրերի կամ 1933 թվականի հոկտեմբերի 28-ի և 1938 թվականի փետրվարի 10-ի կոնվենցիաների ուժով կամ 1939 թվականի սեպտեմբերի 14-ի արձանագրության կամ էլ Փախստականների հարցերով միջազգային կազմակերպության կանոնադրության համաձայն,

2. մինչև 1951 թվականի հունվարի 1-ը տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով և ռասայի, կրոնի, դավանանքի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական համոզմունքների համար հետապնդումների զոհ դառնալու միանգամայն հիմնավոր երկյուղի ուժով գտնվում է իր քաղաքացիական պատկանելիության երկրից դուրս և չի կարող օգտվել այդ պետության պաշտպանությունից կամ չի ցանկանում օգտվել այդպիսի պաշտպանությունից վերը հիշատակված երկյուղի հետևանքով կամ չունենալով որոշակի քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության վայրի երկրից դուրս վերը հիշատակված իրադարձությունների հետևանքով՝ չի կարող կամ չի ցանկանում վերադառնալ այդ երկիրը հետապնդումների հիմնավոր երկյուղի պատճառով⁸:

Սույն կոնվենցիայով տրված հասկացությունը նախկինների համեմատ ավելի լայն է: Նախ՝ այն անձին փախստականի կարգավիճակով է օժտում հետապնդման հիմնավոր երկյուղի առկայության դեպքում և ոչ թե պայմանավորված կոնկրետ ճգնաժամով կամ առանձնացված ազգային պատկանելիության հիմքով: Այն ավելի է ընդարձակում նաև հիմնավոր երկյուղի առաջացման պատճառ հանդիսացող հիմքերը՝ առանձնացնելով 5 կոնկրետ հատկանիշ՝ ռասա, կրոն, դավանանք, քաղաքացիություն, որոշակի սոցիալական խմբի պատկանելություն կամ քաղաքական համոզմունքների հարելը: Սակայն այս հիմքերից 4-ն էին տեղ գտել կոնվենցիայի նախագծում, 5-րդը՝ սոցիալական խմբին պատկանելը, ներկայացվեց ժնկի խորհրդատուների ժամանակ Շվեդիայի ներկայացուցչի կողմից⁹, որը փոփոխությունը հիմնավորում էր այսպես. որոշ փախստականներ հետապնդման են ենթարկվել որոշակի սոցիալական խմբի պատկանելու պատճառով, սակայն Կոնվենցիայի նախնական տարբերակը չի նախատեսում նման դեպքերի առկայություն, ուստի այս պատճառով հետապնդման ենթարկված անձանց վերաբերյալ դրույթներ ևս պետք է ամրագրվեն Կոնվենցիայում¹⁰: Շվեդիայի կողմից առաջարկված փոփոխությունը ընդունվեց 14 կողմ, 0 դեմ, 8 ձեռնպահ ձայներով¹¹:

Ինչևէ, 1951թ. Կոնվենցիան, ամրագրելով փախստականի հասկացությունը, նաև որոշակի ժամանակագրական և աշխարհագրական սահմանափակումներ նախատեսեց՝ այլընտրանքային հնարավորություն տալով անդամ պետություններին միանալիս որոշել՝ հոդված 1-ի Բ կետի ա), թե բ) ենթակետին են ցանկանում միանալ՝ համապատասխանաբար ընդունելով Կոնվենցիայով սահմանված աշխարհագրական սահմանափակումը և

⁸Տե՛ս «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիա, հոդված 1, բաժին Ա կետեր (1),(2):

⁹Տե՛ս UN Doc. A/CONF.2/SR.9, Շվեդիայի ներկայացուցչի Ստուր Պետրենն էր: Տե՛ս նաև Aleinikoff A.T. Protected Characteristics and Social Perceptions: An Analysis of the Meaning of “Membership of a Particular Social Group”, Cambridge University Press, June 2003, էջեր 3-4:

¹⁰Տե՛ս նույն տեղում:

¹¹Տե՛ս UN Doc.A/CONF.2/SR.23. ՄԱԿ-ի համապատասխան փաստաթղթում չի նշվում, թե կոնկրետ որ պետությունն է կողմ եղել, որը՝ ձեռնպահ:

պատրաստականություն հայտնելով ընդունել փախստականներ նաև Եվրոպայի սահմաններից դուրս:

«Փախստական» հասկացության վերաբերյալ քննարկումների ընթացքում Փախստականների և ապաքաղաքացիների հարցերով հատուկ կոմիտեում Ամերիկայի Միացյալ Նահանգները իր անհանգստությունն արտահայտեց այն առիթով, որ «չափազանց անորոշ» սահմանումը կարող է անկանխատեսելի (չափից ավելի) պարտավորություններ առաջացնել և պետությունների միջև տարածայնությունների ձևավորման պատճառ դառնալ այն կիրառելու և մեկնաբանելու ընթացքում¹²:

ԱՄՆ ներկայացուցիչները նաև հայտարարեցին, որ փախստական հասկացությունը չպետք է լինի չափազանց նեղ, իսկ կիրառման առումով էլ՝ չափազանց սահմանափակ: Նրանք առաջարկում էին առանձնացնել փախստականների չորս խումբ՝ իրենց հայրենիքից դուրս որոշակի պատճառներով հետապնդումների կամ զոհ դառնալու հիմնավոր երկյուղ ունենալու հետևանքով, իրենց երկիրը երկրորդ համաշխարհային պատերազմն սկսվելուց հետո լքածներ, կամ «...ովքեր հնարավոր է, որ ստիպված կլինեն ապագայում լքել իրենց երկիրը նույնանման պատճառներով...»¹³:

«Փախստականների կարգավիճակի մասին» 1951թ. կոնվենցիայում ամրագրված «փախստական» հասկացության սահմանման որոշ սահմանափակումները հաշվի առնելով՝ կոնվենցիոն դրույթները ի սկզբանե փաստորեն տարածվում էին ոչ բոլոր փախստականների վրա: Այդ պատճառով էլ Լիազոր ներկայացուցիչների խորհրդաժողովի եզրափակիչ ակտում որպես առաջարկություն խոսվում էր զուտ կոնվենցիայի գործողության շրջանակներով կաշկանդված չլինելու մասին, և հույս հայտնում պետությունների կողմից իրենց տարածքում որպես փախստականներ գտնվող անձանց նկատմամբ Կոնվենցիայով սահմանված ռեժիմը կիրառելու վերաբերյալ նույնիսկ այն դեպքում, երբ վերջիններս չէին համապատասխանում կոնվենցիայով սահմանված փախստականի հասկացությանը¹⁴:

«Փախստականների կարգավիճակի մասին» 1967թ. ժնևի կոնվենցիային կից արձանագրության ընդունմամբ այդ սահմանափակումը պաշտոնապես վերացվեց¹⁵:

Ինչևէ, վավերացնելով կոնվենցիան՝ պետությունները համաձայնեցին ստանձնել պայմանագրով ամրագրված պարտավորությունները՝ կապված փախստականի հասկացության հետ: Կոնվենցիան, իհարկե, չի պարտադրում պետություններին անպայմանորեն ընդունել փախստականներին իրենց տարածք¹⁶: Ընդունելու վերաբերյալ որոշում կայացնելը մնում է պետությունների կամքի և հնարավորությունների վրա՝ կարգավորվելով ներպետական օրենսդրությամբ: Տարբեր պետություններ իրենց ներպետական օրենսդրությամբ

¹²Տե՛ս Գուդվին-Գիլլ Գ.Շ., Статус беженца в международном праве, М., ЮНИТИ, 1997, էջեր 32-33:

¹³Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև Ad Hoc Committee on Statelessness and Related Problems, United States of America: Memorandum on the Definition Article of the Preliminary Draft Convention Relating to the Status of Refugees (and Stateless Persons) UN Doc. E/AC.32/L.4:

¹⁴Տե՛ս Заключительный акт созданной ООН конференции полномочных представителей по вопросу о статусе беженцев и апатридов, Рекомендация E:

¹⁵Տե՛ս Փախստականների կարգավիճակի մասին արձանագրություն, հոկտեմբերի 4, 1967թ., հոդված 1:

¹⁶Տե՛ս Կոնվենցիան չի պարտադրում պետություններին անպայմանորեն կարգավիճակ տրամադրել կամ ապաստան տալ, սակայն պարտադրում է անդամ-պետություններին իր երկրում ապաստան տրված փախստականներին շնորհել որոշակի իրավունքներով: Տե՛ս հոդվածներ 13-30:

տարբեր կարգավորում են տվել այս խնդրին՝ կոնվենցիայով տրված սահմանման հիման վրա ձևավորելով սեփական մոտեցում՝ այն որպես իրենց երկիր ընդունելու համար չափանիշ: Օրինակ, Ֆրանսիայի ներպետական օրենսդրությունը փախստականի հասկացությունը տալիս է կոնվենցիայով նախատեսված պայմաններին լիովին համապատասխան: Նրանք, ովքեր համապատասխանում են կոնվենցիայով տրված սահմանմանը, իրավունք ունեն մնալու երկրում¹⁷: Շվեյցարիայում փախստականի հասկացությունը ներառում է այն անձանց, ովքեր լուրջ վնաս են կրել կամ երկյուղ ունեն այդպիսին կրելու իրենց ռասայի, դավանանքի, ազգության, քաղաքական հայացքների կամ սոցիալական խմբի պատկանելության պատճառով¹⁸: Հայաստանի Հանրապետությունը ևս, 1993թ. հոկտեմբերի 4-ին միանալով 1951թ. «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիային և դրանով իսկ ստանձնելով համապատասխան պարտավորություններ, ընդունեց ՀՀ օրենք «Փախստականների և ապաստանի մասին», որի հոդված 6-ը սահմանում է, թե ով է փախստականը: Սահմավորապես հոդված 1-ի 1-ին ենթակետը կրկնում է կոնվենցիոն դրույթը, իսկ 2-րդ ենթակետը փախստական է ճանաչում նաև այն օտարերկրյա քաղաքացուն, որը ստիպված է լքել իր քաղաքացիության երկիրը, իսկ քաղաքացիություն չունեցող անձը՝ իր նախկին մշտական բնակության երկիրը՝ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով¹⁹: Փաստորեն, ինչպես տեսնում ենք, ՀՀ-ն ավելի է ընդլայնել փախստականի հասկացությունը՝ ներառելով նաև մի շարք տարածաշրջանային կոնվենցիաներով ամրագրված փախստականի հասկացությունը, որոնց մասին կխոսվի ստորև:

Այսպիսով, ընդհանրացնելով «Փախստականների կարգավիճակի մասին» 1951թ. կոնվենցիայում սահմանված «Փախստական» հասկացության բովանդակությունը՝ կարող ենք եզրակացնել, որ փախստական են ճանաչվում այն անձինք, ովքեր ունեն հետևյալ հիմնական հատկանիշները կամ բավարարում են հետևյալ պահանջները՝

1. նրանք գտնվում են իրենց ծագման երկրից դուրս (քաղաքացիական պատկանելության կամ, եթե որևէ պետության քաղաքացի չեն, իրենց նախկին մշտական բնակության վայրի երկրից դուրս),

2. նրանք չեն կարող կամ չեն ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից կամ վերադառնալ այնտեղ,

3. այդպիսի անհնարինությունը կամ ցանկության բացակայությունը պայմանավորված է ռասայի, կրոնի, դավանանքի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական համոզմունքների հատկանիշներով իրականացվող հետապնդումների ենթարկվելու միանգամայն հիմնավոր երկյուղով,

4. հետապնդումները, որոնցից երկյուղում են, պայմանավորված են ռասայական, կրոնական, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական համոզմունքների հատկանիշներով:

¹⁷ Տե՛ս Law No.1952- 893 of July 25, 1952, concerning the Creation of a French Office for the Protection of Refugees and Stateless Persons, 25 July 1952, հոդված 2 <http://www.refworld.org/docid/3ae6b4e414.html> (դիտվել է 24 հունվարի 2014թ.):

¹⁸ Տե՛ս SR 142.31 Asylum Act (26 June, 1998), հոդված 3 http://www.admin.ch/ch/e/rs/142_31/index.html (դիտվել է 24 հունվարի 2014թ.):

¹⁹ Տե՛ս «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, 2008թ. նոյեմբերի 27, հոդված 6, կետ 1, 1), 2) ենթակետեր:

1951թ.Կոնվենցիայով և նրան կից 1967թ. արձանագրությամբ ամրագրված փախտականի համընդհանուր սահմանումն իր համալրումն ստացավ նաև մի շարք տարածաշրջանային փաստաթղթերում, որոնց թվին են դասվում նաև Հանձման մասին համաձայնագիրը (Կարակաս, 1911թ.), Ապաստանի մասին կոնվենցիան (Հավանա, 1926թ.), Քաղաքական ապաստանի վերաբերյալ կոնվենցիան (Մոնտեվիդեո, 1933թ.), Տարածքային ապաստանի մասին կոնվենցիան (Կարակաս, 1954թ.), Դիվանագիտական ապաստանի վերաբերյալ կոնվենցիան (Կարակաս, 1954թ.) և այլն:

Փախստականների իրավունքների պաշտպանությանն ուղղված եվրոպական վերոնշյալ մոտեցումից տարբերվում են Լատինական Ամերիկայի, ինչպես նաև Աֆրիկայի մոտեցումները: Նշված երկու տարածաշրջաններում էլ ընդունվեցին «փախստական» հասկացության ավելի լայն սահմանումներ: Աֆրիկյան միասնության կազմակերպության անդամ պետությունների կառավարությունների ղեկավարների ասամբլեայի կողմից 1969թ. սեպտեմբերի 10-ին ընդունվեց Աֆրիկայում փախստականների հատուկ հիմնախնդիրները կարգավորող կոնվենցիան (**այսուհետև՝ ԱՄԿ կոնվենցիա**), որը, բացի փախստականի կոնվենցիոն սահմանումից, փախստական էր ճանաչում նաև նրանց, ովքեր իրենց ծագման երկիրը լքել էին արտաքին հարձակման, բռնազավթման, օտար բռնատիրության կամ հասարակական կարգը լրջորեն խախտող իրադարձությունների հետևանքով²⁰:

1984թ. Ամերիկյան պետությունների կազմակերպության կողմից ընդունված Կարթագենյան հռչակագիրը (**այսուհետև՝ ԱՊԿ հռչակագիր**) նույնպես ավելի ընդլայնեց փախստականի հասկացությունը՝ որպես փախստական ճանաչելով անձանց, ովքեր լքել են իրենց երկիրը իրենց կյանքին, անվտանգությանը կամ ազատությանը բռնության, արտաքին ագրեսիայի, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ հանգամանքների հետևանքով վտանգ սպառնալու պատճառով²¹:

Տարածաշրջանային մակարդակով փախստականների միջազգային-իրավական պաշտպանության հիմնախնդիրների լուծման մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև հետխորհրդային պետությունների շրջանակներում դրա կարգավորմանը: Մասնավորապես, 1993թ. սեպտեմբերի 24-ին ԱՊՀ երկրների կողմից ընդունվեց «Փախստականներին և հարկադիր վերաբնակիչներին օգնության մասին» համաձայնագիր (այսուհետև՝ 1993թ. Համաձայնագիր), որը ստորագրեց նաև ՀՀ-ն: Համաձայնագրի յուրահատկությունը այն է, որ առաջին անգամ սահմանեց «հարկադիր վերաբնակիչ» հասկացությունը, ըստ որի՝ այդպիսին է այն անձը, ով «...հանդիսանալով ապաստան տրամադրած կողմի քաղաքացի՝ ստիպված լքել է մյուս կողմի տարածքում իր մշտական բնակության վայրը զինված և ազգամիջյան հակամարտությունների հետ կապված ռասայական կամ ազգային պատկանելիության, դավանանքի, լեզվի, քաղաքական հանգուցումների, ինչպես նաև որոշակի սոցիալական խմբին պատկանելու հիմքով նրա կամ նրա ընտանիքի անդամներից որևէ մեկի նկատմամբ կատարված բռնության կամ որևէ այլ

²⁰St'u Convention Governing the Specific Aspects of Refugee Problems in Africa, 10 September 1969, 1001 U.N.T.S. 45, հոդված 1, կետեր 1,2 <http://www.refworld.org/docid/3ae6b36018.html> (դիտվել է 22 հունվարի 2014):

²¹St'u Cartagena Declaration on Refugees, Colloquium on the International Protection of Refugees in Central America, Mexico and Panama, 22 November 1984, բաժին 3, կետ 3 <http://www.refworld.org/docid/3ae6b36ec.html> (դիտվել է 22 հունվարի 2014թ.):

ծևով հետապնդման կամ հետապնդման իրական երկյուղի պատճառով»²²:

Փաստորեն, 1993թ. Համաձայնագիրը ևս փախստականի հասկացության ավելի լայն սահմանում է ամրագրում և նույն պայմաններն է նախատեսում հարկադիր վերաբնակչի համար՝ մեկ տարբերությամբ. վերջինս պետք է լինի ընդունող երկրի քաղաքացի, բացի դրանից Համաձայնագիրը բռնությունը կամ այլ ձևով հետապնդման իրականացումը կամ հետապնդման իրական երկյուղը հնարավոր է համարում ոչ միայն փախստականի, այլ նաև նրա ընտանիքի անդամների նկատմամբ, ինչպես նաև պահանջում է, որ բռնությունը կամ այլ ձևով հետապնդումը կամ դրա իրական երկյուղը կապված լինի զինված և ազգամիջյան հակամարտության հետ: Համաձայնագիրը հետապնդման հիմքերի սպառնիչ ցանկի մեջ է ընդգրկում նաև լեզվական պատկանելիությունը²³: Ի կատարումն Համաձայնագրի դրույթների՝ հողված 8-ով նախատեսվեց Փախստականների և հարկադիր վերաբնակիչների աջակցության միջպետական ֆոնդի ստեղծումը²⁴: 1996թ. մայիսի 30-31-ը ժնկում հրավիրվեց տարածաշրջանային կոնֆերանս, որը նպատակ էր հետապնդում անդրադառնալու ԱՊՀ երկրներում և շահագրգիռ հարևան երկրներում փախստականների, տեղահանված անձանց, ինչպես նաև բռնի տեղահանման այլ ձևերի և վերադարձողների հիմնախնդիրներին: ԱՊՀ կոնֆերանսը դադարեցրեց իր գործունեությունը 2005 թվականին և մինչ այսօր նման մեծ մասշտաբի կոնֆերանս այլևս չի կազմակերպվել, որը թերևս կարելի է սխալ համարել, քանի որ այսպիսի միջոցառումների կազմակերպումը կողմերին հնարավորություն կտար ավելի իրազեկ լինելու միմյանց խնդիրներին և փորձելու աջակցել դրանց լուծմանը, ինչպես պարտավորված են 1993թ. Համաձայնագրով²⁵: Բացի դրանից՝ հաշվի առնելով հատկապես վերջին ժամանակաշրջանում տարածաշրջանում տեղի ունեցող հակամարտությունների հետևանքով փախստականների և բռնի տեղահանված անձանց թվի աճը, կարելի է ենթադրել, որ այդ Համաձայնագիրը իր նպատակին չի ծառայում և միգրացիոն ժամանակավրեպ է: Կարծում ենք՝ նպատակահարմար կլիներ մասնավորապես, որ ՄԱԿ ՓԳՀ-ը կազմակերպեր տարածաշրջանային կոնֆերանս, որտեղ կքննարկվեն 1993թ. Համաձայնագրի դրույթների կիրառման արդյունավետությունը և ժամանակին համահունչ փոփոխություններ իրականացնելու նպատակահարմարությունը: Միգրացիոն խնդրի լուծմանը կաջակցի նաև Փախստականների և հարկադիր վերաբնակիչների աջակցության միջպետական ֆոնդի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածումը ինչպես հետխորհրդային երկրների, այնպես էլ այլ պետությունների և միջազգային կառույցների միջև՝ փախստականների և բռնի տեղահանված անձանց հետ կապված հիմնախնդիրների համատեղ լուծումներ փնտրելու և իրականացնելու նպատակով: Կարևոր են նաև մոնիտորինգի և գնահատման արդյունավետ համակարգերի ստեղծումն ու գործադրումը, որոնք ոլորտի զարգացման համատեքստում նորների նպատակային կիրառման համար վճռորոշ նշանակություն ունեն: Փախստականների հիմնախնդրի ձևավորմանը վերաբերող իրավիճակները

²² St'u Соглашение о помощи беженцам и вынужденным переселенцам (24 սեպտեմբեր 1993թ.), հողված 2 <http://reflaw.narod.ru> (դիտվել է 15 հունվարի 2014):

²³ St'u О толковании Соглашения о помощи беженцам и вынужденным переселенцам от 24 сентября 1993 года. Решение Экономического Суда Содружества Независимых Государств от 11 сентября 1996 года № С-1/14-96 <http://adilet.zan.kz/rus/docs/H96S000014> (դիտվել է 15 հունվարի 2014թ.):

²⁴ St'u Соглашение о помощи беженцам и вынужденным переселенцам (24 սեպտեմբերի 1993թ.), հողված 8 <http://reflaw.narod.ru> (դիտվել է 15 հունվարի 2014թ.):

²⁵ St'u CIS Conference <https://www.iom.int> (դիտվել է 15 հունվարի 2014թ.):

սովորաբար դիմամիկ փոփոխվում են, ուստի անհրաժեշտ է իրականացվող ծրագրերը պարբերաբար ենթարկել մոնիտորինգի՝ դրանք փոփոխվող իրավիճակին և փախստականների իրական կարիքներին համապատասխանեցնելու և հարմարեցնելու նպատակով:

Հիշատակման է արժանի նաև մեկ այլ կարևորագույն խնդիր, որի առջև այսօր կանգնած է ողջ մարդկությունը: Խոսքը շրջակա միջավայրում տեղի ունեցող բացասական փոփոխությունների մասին է՝ բնական աղետ, գլոբալ տաքացում, օզոնային շերտի քայքայում և այլն, որոնք ներկայումս միգրացիայի ձևավորման այլ պատճառների հետ միասին ընկած են անձանց տեղահանման հիմքում: Նման պարագայում տեղահանված անձինք որպես կանոն այլևս հնարավորություն չեն ունենում վերադառնալու իրենց ծագման կամ մշտական բնակության վայրերը: Նույնիսկ պատմականորեն հայտնի են դեպքեր, երբ առանձին պետություններ կամ քաղաքներ վերացել են կամ այսօր կանգնած են վերանալու եզրին²⁶:

Այնուամենայնիվ այսօր չկա որևէ միջազգային փաստաթուղթ, որը կպարտավորեցնի պետություններին ընդունելու «էկոլոգիական փախստականներին»²⁷: Շրջակա միջավայրի խնդիրների հետևանքով տեղահանված անձանց վրա չեն տարածվում նաև 1951թ. կոնվենցիայի և 1967թ. արձանագրության դրույթները, քանի որ դրանք նախառաջ չեն համապատասխանում 1951թ. Կոնվենցիայով փախստական ճանաչելու համար առանցքային համարվող «հիմնավոր երկյուղի վրա հիմնված հետապնդում ունենալու» պահանջին: Շրջակա միջավայրի փոփոխությունները «հետապնդում» հասկացության

²⁶ Թերևս դրա առավել վառ օրինակն է Խաղաղ օվկիանոսի 9 կղզիների վրա տեղակայված Տուվալու պետությունը, որի շուրջ 10 հզ. բնակչության տնտեսական մակարդակը բավականին ցածր է՝ ի տարբերություն այն շրջապատող ջրի մակարդակի, որի պատճառով էլ այն մտնում է ցածրադիր կղզիներից և աստիճան կազմավորված երկրների խմբի մեջ (երկրի ամենաբարձր կետը ծովի մակարդակից 4,6 մետր բարձր է): Այդ պատճառով էլ Տուվալուն մշտապես միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է, և մի շարք հեղինակների կարծիքով այն մինչև 2050 թիվը բնակվելու համար այլևս պիտանի չի լինի (տե՛ս Mortreux C., Barnett J., Climate Change, Migration and Adaptation in Funafuti, Tuvalu, Global Environment Change Volume 19(1), 1 Feb. 2009, p. 105-112), <http://www.deepdyve.com/lp/elsevier/climate-change-migration-and-adaptation-in-funafuti-tuvalu-liG9zAXI8E> (դիտվել է 20 հունվարի 2014թ.): Նման վտանգի առջև այսօր կանգնած են նաև մի շարք այլ երկրներ. Եմենը կարող է զրկվել ջրից, Չինաստանի վրա ազդում է Գոբի անապատի ընդլայնումը, Կուրուբատին, ինչպես Տուվալուն միայն մի քանի սանտիմետր է բարձր ջրի մակերևույթից, Բանգլադեշը, որը կարող է իր տարածքի 1/5-ը կորցնել ծովի մակարդակի բարձրացումից հետևանքով: Տե՛ս նաև Wiebelt M., Breisinger C., Ecker O., Al-Riffai P., Robertson R., Thiele R., Climate Change and Floods in Yemen. Impacts on Food Security and Options for Adaption, IFPRI Discussion Paper, December, 2011, էջ 9:

²⁷ Եզրույթն առաջին անգամ առաջ է քաշվել 1970-ականներին հայտնի իրավաբան-էկոլոգ, Worldwatch institute-ի հիմնադիր Լեստեր Բրաունի կողմից: Այնուհետև մի շարք այլ հեղինակների կողմից փորձ է արվել տալու «էկոլոգիական փախստական» հասկացության սահմանումը: Ըստ անգլիացի էկոլոգ Նորման Մայերսի՝ այդպիսիք են համարվում «մարդիկ, ովքեր այլևս չեն կարողանում իրենց երկրում գոյատևման անվտանգ միջոցներ ունենալ երաշտի, հողի քայքայման, անապատացման, անտառահատումների և այլ էկոլոգիական խնդիրների, ինչպես նաև ժողովրդագրական ճնշումների և խորը աղքատության հետ կապված համապատասխան խնդիրների պատճառով» (տե՛ս Myers N. Environmental Refugees: An Emergent Security Issue (2005թ. մայիսի 23-27 Պրագայում 13-րդ Տնտեսական ֆորումի ժամանակ ներկայացրած զեկուցում), էջ 1, <http://www.osce.org/eea/14851> (դիտվել է 20 հունվարի, 2014թ.), տե՛ս նաև New issues in refugee research, Working Paper No. 34, Black R., “Environmental refugees: myth or reality?” University of Sussex, Falmer, Brighton BN1 9SJ United Kingdom, March 2001, էջ 2:

մեջ չեն մտնում: Բացի դրանից՝ փախստականի հասկացությունը տարածվում է միայն այն անձանց վրա, ովքեր հատել են իրենց երկրի սահմանները, իսկ «էկոլոգիական փախստականների» դեպքում այդպիսիք կարող են հանդես գալ նաև այն անձինք, ովքեր տեղահանվել են իրենց երկրի սահմաններում և պարզապես փոխել իրենց բնակավայրը երկրի ներսում:

Եթե փորձենք ավելի լայն մեկնաբանել փախստականների վերաբերյալ տարածաշրջանային փաստաթղթերի, օրինակ՝ ԱՊԿ 1984թ. հռչակագրի դրույթները, ըստ որի փախստականի կարգավիճակ կարող է տրամադրվել նաև այն անձին, ով լքել է իր պետության տարածքը «...հասարակական կարգը լրջորեն խախտող իրադարձությունների հետևանքով»²⁸, ապա նույնիսկ այս դեպքում էլ էկոլոգիական միգրանտը պետք է ցույց տա, որ իր նկատմամբ հետապնդում կամ բռնություն է կատարվել:

Տասնամյակներ շարունակ 1951թ. կոնվենցիան շարունակում է մնալ այն հիմնական փաստաթուղթը, որը տալիս է փախստական հասկացության համընդհանուր սահմանումը և իրավական պաշտպանություն է տրամադրում հետապնդման երկյուղ ունեցող և դրա հետևանքով իրենց հայրենի երկրի սահմանները լքած անձանց: Այնուամենայնիվ այն հաճախ է ենթարկվում քննադատության, որի հիմնական պատճառն այն է, որ ստեղծվել էր կոնկրետ ժամանակաշրջանի համար, որի մասին վկայում է և՛ 1967թ. Արձանագրությունը, և՛ հետագայում ընդունված տարածաշրջանային իրավական մեխանիզմները, և՛ թե այն, որ ՄԱԿ ՓԳԳ-ն բազմիցս փորձել է տարաբնույթ ձեռնարկներ հրատարակելու միջոցով պարզաբանել վերջինիս այս կամ այն դրույթը: Բացի դրանից՝ կոնվենցիան չի ամրագրում այն կարգը, որի հիման վրա պետությունը կիրականացնի փախստականի կարգավիճակի որոշման գործընթացը և իրականում չի երաշխավորում ընդունող երկիր անձի մուտք գործելը, ըստ այդմ էլ չի տրամադրում անձի կողմից ապաստան ստանալու կոնկրետ երաշխիքներ: Կարելի է ենթադրել, որ տարածաշրջանային մեխանիզմները ավելի լայն հնարավորություն ունեն վեր հանելու կոնկրետ տարածաշրջանին բնորոշ խնդիրները և արդյունավետ լուծում տալու դրանց: Կոնկրետ տարածաշրջանում միասնական և շարունակական բնույթ ունեցող համակարգի ձևավորումը և զարգացումը կարող են ավելի կատարյալ դարձնել առավել խոցելի խմբերի պաշտպանությունը: Տարածաշրջանային միասնական միջոցառումները, անկասկած, դրական ազդեցություն են թողնում ապաստան հայցողների և փախստականների նկատմամբ ընդունվող որոշումների արդյունավետության բարձրացման, գործընթացների արագության, որակի և արդարացիության վրա: Գործողությունների համաձայնեցումը կարող է նպաստել կադրերի վերապատրաստման, ոլորտի վերաբերյալ գիտելիքների փոխանակման, ռեսուրսների կառավարման, սահմանային վերահսկողության և այլ ոլորտներում փոխհամագործակցության կայուն հիմքերի ձևավորմանը և հետագա ընդլայնմանը:

Գրականության մեջ շատ են նաև կարծիքներն այն մասին, որ փախստականների հասկացության համընդհանուր մակարդակով ընդլայնումը ծայրահեղ անհրաժեշտություն է այսօր, որպեսզի այն ներառի նաև պատերազմի և քաղաքացիական հակամարտությունների հետևանքով փախուստի դիմած անձանց, ինչպես նաև «էկոլոգիական փախստականներին»: Դրա մասին է վկայում նաև ՄԱԿ ՓԳԳ-ի կողմից պատերազմի զո-

²⁸St u Cartagena Declaration on Refugees, Colloquium on the International Protection of Refugees in Central America, Mexico and Panama, 22 November 1984, բաժին 3, կետ 3 <http://www.refworld.org/docid/3ae6b36ec.html> (դիտվել է 22 հունվարի 2014թ.):

հերին իր պաշտպանության տակ վերցնելու հանգամանքը, այնպիսի նոր եզրույթների ստեղծումը, ինչպիսիք են «նտահոգության առարկա հանդիսացող անձինք» կամ «անձինք, ովքեր հայտնվել են փախստականներին նման իրավիճակներում»²⁹: Բացի դրանից՝ շրջանցելով «փախստական» եզրույթը՝ ՄԱԿ ՓԳՀ-ն ևս անդրադարձել է «շրջակա միջավայրի հետևանքով տեղահանված անձանց», որոնց սահմանել է որպես անձինք, ովքեր «տեղահանվել են կամ պարտավորված են եղել լքել իրենց սովորական բնակության վայրերը իրենց կյանքին, ապրուստի միջոցներին և բարեկեցությանը շրջակա միջավայրի, էկոլոգիական կամ կլիմայական բացասական գործընթացների կամ իրադարձությունների արդյունքում սպառնացող լուրջ վտանգի պատճառով»³⁰:

Հիրավի անվիճելի է, որ ժամանակակից աշխարհում փախստականների ձևավորման հիմնական պատճառ են պատերազմները, երկրի ներսում ընթացող քաղաքացիական ընդհարումները, որոնց վկայությունն է Սիրիայում 2011թ. ընթացող քաղաքացիական պատերազմը, որի պատճառով տասնյակիազարավոր բնակիչներ ստիպված եղան լքել իրենց երկիրը և ապաստան փնտրել այլ երկրներում: Այսօր այդ պատճառների թվին են դասվում նաև շրջակա միջավայրի արհավիրքները, որը պետություններից պահանջում է իրենց ուժերի հնարավորինս կենտրոնացումը՝ պայքարելու մարդկության կյանքի բնականոն ընթացքն ապահովելու համար: Այս ամենը բխում է նաև ՄԱԿ-ի կանոնադրության մեր ամրագրված միջազգային հանրության նպատակներից, ինչպիսիք են՝ «...փրկել գալիք սերունդներին պատերազմի արհավիրքից, որը մեր կյանքի ընթացքում երկու անգամ անասելի վիշտ է պատճառել մարդկությանը և վերահաստատել հավատը մարդու հիմնական իրավունքների, անհատի արժանապատվության և արժեքի, տղամարդու և կնոջ, ինչպես նաև մեծ ու փոքր ազգերի հավասար իրավունքների նկատմամբ...»³¹: Այնուամենայնիվ գտնում ենք, որ 1951թ. Կոնվենցիայով տրված սահմանման ընդլայնումը՝ ներառելու համար վերոնշյալ կատեգորիաները, խնդրի լուծում չէ, ընդհակառակը՝ այն կարող է բացասաբար անդրադառնալ փախստականների և ապաստանի վերաբերյալ արդեն իսկ գոյություն ունեցող ծրագրերի բնականոն ընթացքի վրա: Փախստականի հասկացության ընդլայնումը կարող է հանգեցնել այն բանին, որ փախստականների համար սահմանված միջազգային չափանիշները չընդունող մի շարք պետություններ ընդհանրապես չեն կիրառի դրանք, ինչն էլ իր հերթին լրացուցիչ պարտավորությունների առջև կկանգնեցնի այն երկրներին, որոնք առանց այդ էլ կրում են միջազգային իրավունքով սահմանված իրենց պարտավորությունների ծանր բեռը: Վերջիններս արդեն իսկ ստիպված կլինեն ավելի մեծաքանակ թվով ապաստան հայցողներ ընդունել իրենց տարածք, ինչն էլ կստիպի կոնկրետ սահմանափակումներ ամրագրել փախստականների ընդուն-

²⁹ Տե՛ս UNHCR Statistical online population database: sources, methods and data considerations/ Country data sheet, 1 January, 2013 <http://www.unhcr.org/> (ղիտվել է 15 հունվարի, 2014):

³⁰ Տե՛ս Gorlick B., Environmentally displaced persons: A UNHCR perspective (“Environmental Refugees: The Forgotten Migrants” թեմայով հանդիպման ժամանակ արված ներկայացում (presentation)), Նյու Յորք, մայիս, 2007, http://www.equatorinitiative.org/images/stories/events/2009events/brian_gorlick_environmentally_displaced_persons_unhcr_perspective.pdf (ղիտվել է 15 հունվարի, 2014), տե՛ս նաև Besthorn F., Meyer E., Environmentally Displaced Persons: Broadening Social Work’s Helping Imperative, Critical social work, Volume 11 No. 3, 2010, էջ 5 <http://www1.uwindsor.ca/criticalsocialwork/environmentally-displaced-persons-broadening-social-work%E2%80%99s-helping-imperative> (ղիտվել է 15 հունվարի 2014):

³¹ Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ Կանոնադրություն, 1950թ., նախաբան:

ման և համապատասխան ծրագրերում նրանց ներառելու ներպետական չափանիշների մեջ, այնինչ, կարծում ենք, որ այս խնդրի արդյունավետ լուծումն իրականում պետք է ապահովվի ներպետական մակարդակով: Դժվար կլինի նաև տարանջատել «էկոլոգիական փախստականների» տնտեսական միգրանտներից, հարմարացնել փախստականի սահմանումը «էկոլոգիական փախստականներին», որի հետևանքով նրանց մի մասը և միգրացե պաշտպանության առավել կարիք ունեցող հատվածը դուրս կմնա այդ սահմանումից, իսկ «ոչ էկոլոգիական փախստականները» ևս կկարողանան դիմել պաշտպանություն ստանալու համար: Այս ամենն անտեղի կերկարացնի և կբարդացնի ապաստանի վերաբերյալ որոշում ընդունելու գործընթացը:

Ակնհայտ է, որ այսօր առկա փախստականների ռեժիմը որոշակիորեն ժամանակավրեպ է և կատարելագործման ու ամրապնդման կարիք ունի: Ինչպես նշում է Գ.Գուդվին-Գիլը, «...կոնվենցիան թերի դիտելու համար շատ պատճառներ կան, սակայն այն դեռևս կարևոր և վավեր փաստաթուղթ է՝ չնայած իր սխալ ուղղվածությանը, ...այն անկարող է ներառել էթնիկ բռնությունների և զենդերային հետապնդումների հետևանքով ձևավորված «նոր փախստականներին», այն անարձագանք է ազգային, տարածաշրջանային և միջազգային անվտանգության հետ կապված հարցերին, թռիչքի կամ տեղաշարժերի բնույթի փոփոխման դեպքերում այն չունի ճկուն կարգավորման համակարգ»³²: Խնդիրն այն է, թե ինչպես իրականացնել փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանությունը մի շարք պետությունների ժամանակակից միգրացիոն քաղաքականության համատեքստում: Կոնվենցիան ունի թերություններ, բացթողումներ, որոնք ավելի նկատելի են այսօր, քան իր ստեղծման ժամանակաշրջանում, սակայն գտնում ենք, որ այդ ամենը հնարավոր է կարգավորել առանց այն փոփոխելու կամ նոր միջազգային-իրավական փաստաթուղթ ընդունելու: Կարծում ենք, որ քիչ հավանական է, որ ներկայիս պայմաններում պետությունները կստորագրեին 1951թ. կոնվենցիան, եթե այն ընդունվեր այսօր: Ինչպես նշել է ժնկի Միգրացիայի միջազգային կազմակերպությունում Միգրացիայի քաղաքականության հետազոտությունների ղեկավար Ժ. Ապայվը. «Ոչ մի պետություն չի ցանկանում վերսկսել նույնիսկ փախստականի հասկացության վերաբերյալ քննարկումները»³³:

Այս ամենի հետ միասին փախստականների պաշտպանության մեխանիզմների վերանայումը այսօր անհրաժեշտություն է, որպեսզի դրանք կենսունակ լինեն ժամանակակից պայմաններում, որպեսզի ավելի մեծ ուշադրություն հատկացվի այն անձանց նկատմամբ մարդասիրական աջակցությանը, ովքեր դրա կարիքը իրոք ունեն՝ չսահմանափակվելով զուտ հետապնդման հատկանիշների առկայության կամ բացակայության փաստով: Այս առումով հատկապես կարևորում ենք անդամ պետությունների դերը և նրանց կողմից իրականացվող իմպլեմենտացիոն գործընթացների նկատմամբ հետևողականությունն ու վերահսկողությունը, համագործակցության վերաբերյալ համաձայնագրերի կնքումը, որոնք խթանում են միջազգային պաշտպանության տրամադրումը և ուժեղացնում միջազգային-իրավական ռեժիմը հատկապես ներկա պայմաններում, երբ մենք գործ ունենք փախստականների խառը հոսքերի հետ: Դա մասնավորապես կնպաստի պետությունների պարտավորությունների արդարացի բաշխմանը և սահմանների

³² u Goodwin-Gill G., *Asylum 2001 – a Convention and a Purpose* (Editorial Announcement), *International Journal of Refugee Law*, Volume 13, Issue 3, Oxford, 2001, էջ 1:

³³ Barnett L., *Global Governance and the Evolution of the International Refugee Regime // New issues in refugee research // Working Paper No. 54, 2002, էջ 19:*

արդյունավետ կառավարմանը: Անհրաժեշտ է ստեղծել միջազգային պաշտպանության այնպիսի մի մոդել, որը հիմնված կլինի պարտավորությունները կիսելու և ոչ թե դրանք փոխանցելու վրա: Այդ առումով համաձայնվելով ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի օգնական Է. Ֆելլերի կարծիքի հետ՝ կոնվենցիան ամրապնդելու և նրան նոր շունչ տալու լավագույն մոդել ենք համարում ապաստանի ազգային համակարգերի վերանայումը, որոնք կամրապնդվեն առավել արդյունավետ պաշտպանություն իրականացնելու և փախստականների ընդունման լավագույն պայմաններ ապահովելու համար կատարվող ներդրումներով³⁴:

Պետությունները համաձայնել են «մշակել համապատասխան միջոցներ, որոնք հնարավոր է անհրաժեշտ լինեն 1951թ. կոնվենցիան և/կամ 1967թ. արձանագրությունը ամրապնդելու համար»³⁵: Բացի դրանից՝ 1951թ. կոնվենցիայի հոդված 35-ը պահանջում է, որ մասնակից պետությունները համագործակցեն ՄԱԿ ՓԳՀ-ի հետ: Այս պահանջն իր ամրագրումն է գտել նաև 1951թ. կոնվենցիայի նախաբանում, ըստ որի՝ «ապաստանի տրամադրումը կարող է անհարկի ծանր բեռ լինել որոշ երկրների համար և ... հիմնախնդրի բավարար լուծումը ... չի կարող ձեռք բերվել առանց միջազգային համագործակցության»³⁶: Այն սահմանում է նաև ՄԱԿ ՓԳՀ-ի դերը փախստականների պաշտպանություն նախատեսող միջազգային կոնվենցիաների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործում՝ ընդգծելով պետությունների համագործակցության անհրաժեշտությունը այդ խնդրի լուծման համար կիրառվող միջոցառումներն արդյունավետ համակարգելու համար³⁷:

Անհրաժեշտ է հասնել ապաստանի՝ գործող ազգային համակարգերի գործողության համակարգվածությանն ու համընդհանրությանը, որպեսզի հասնենք ապաստանի ողջ համակարգի ամրապնդմանը:

Պետություններն իրենք են սահմանում փախստականի կարգավիճակի որոշման իրենց մեխանիզմները, և ստացվում է այնպես, որ մի պետությունում անձը կարող է ճանաչվել փախստական, մյուսում՝ ոչ: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունը որպես փախստական ճանաչում է ոչ միայն 1951թ. կոնվենցիայի հիմքերով հետապնդման ենթարկված կամ հետապնդման երկյուղ ունեցող անձին, այլև տարածաշրջանային փաստաթղթերի օրինակով ընդլայնել է փախստականի հասկացությունը՝ որպես այդպիսին ճանաչելով նաև այն անձանց, ովքեր լքել են իրենց ծագման կամ մշտական բնակության երկիրը «...համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով»³⁸: Մեկ այլ օրինակ. Վրաստանը փախստական է ճանաչում միայն 1951թ. կոնվենցիայով սահմանված չա-

³⁴St' u Feller E., Asylum, Migration and Refugee Protection: Realities, Myths and the Promise of Things to Come, International Journal of Refugee Law, Volume 18, Issue 3- 4, Oxford, 2006, էջեր 15-16

³⁵St' u UNHCR, Declaration of States Parties to the 1951 Convention and or Its 1967 Protocol relating to the Status of Refugees, (16.01. 2002), HCR/MMSP/2001/09, կետ 7 <http://www.refworld.org/docid/3d60f5557.html> (դիտվել է 15 հունվարի 2014):

³⁶St' u Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. կոնվենցիա, նախաբան, կետ 4:

³⁷St' u նույն տեղում, կետ 6:

³⁸St' u «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, 2008թ. նոյեմբերի 27, հոդված 6, կետ 1, 2) ենթակետ:

փանիշներին համապատասխանող անձանց³⁹: Նույն կոնվենցիոն սահմանումն է տրված նաև Լատվիայի, Իտալիայի, Ուկրաինայի և մի շարք այլ երկրների ազգային օրենսդրություններում⁴⁰:

CONTEMPORARY PROBLEMS OF THE DEFINITION OF A REFUGEE

Knarik Vardanyan

*Chair of European and International
Law, Phd student, lecturer*

The article examines the problem of the definition of a refugee in contemporary world. The universal concept of a refugee is set forth in 1951 Convention related to the Status of refugees. Later this universal definition was supplemented with a number of additional regional definitions. These regional mechanisms create broader opportunities to reveal issues which are typical for the concrete region and address them effectively.

At present, there is a trend to enhance the understanding defined by the 1951 Convention through including persons crossing the border of their country due to armed conflicts and violence, as well as, “ecological refugees”. However, the author believes that it cannot serve as a solution and that it can have a negative reflection on the already established and ongoing programmes related to refugees.

In particular, we are confident that the issue can be solved effectively if it is handled on at an inter-governmental level.

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ОПРЕДЕЛЕНИЯ ПОНЯТИЯ БЕЖЕНЦА

Кнарик Варданян

*Кафедра Европейского и международного права,
соискатель, преподаватель*

В статье кратко рассматривается проблема определения беженца в современном мире. Универсальное понятие беженца дано в Конвенции 1951 года о статусе беженцев, которое позднее было дополнено рядом региональных соглашений. Эти региональные механизмы создают более широкие возможности для определения

³⁹Տե՛ս «Փախստականների մասին» 1999թ.Վրաստանի օրենք, հոդված 1, կետ 1:

⁴⁰Տե՛ս Анищик Ю., Сравнительно-правовой анализ статуса беженца // Электронный журнал “Познавательный”, 2013 www.познавательный.рф (դիտվել է 22 դեկտեմբերի 2014):

проблем конкретного региона и их эффективного решения.

В настоящее время существует тенденция расширить универсальное понятие беженца, закрепленное в Конвенции 1951 года, с целью включить жертв вооруженного конфликта, лиц, покинувших границы своей страны в результате насилия, и экологических беженцев. Однако автор считает, что это не является решением проблемы, наоборот оно может оказать негативное влияние на уже существующие программы по беженцам.

Автор убежден, что эффективное решение этой проблемы должно обеспечиваться на национальном уровне.

Բանալի բառեր – փախստական, ապաստան հայցող, Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. Կոնվենցիա, տարածաշրջանային փաստաթղթեր, Աֆրիկյան Միասնության Կազմակերպության 1969թ. Կոնվենցիա, Ամերիկյան Պետությունների Կազմակերպության 1984թ. Հռչակագիր, էկոլոգիական փախստական

Key words: refugee, asylum seeker, Convention related to refugees (1951), regional documents, African Convention (1969), American Declaration (1984), environmental refugees

Ключевые слова: беженец, лицо, ищущее убежище, Конвенция 1951 года о статусе беженцев, региональные документы, Африканская конвенция 1969 года, Американская декларация 1984 года, экологические беженцы